բազայի նորացման համար, քանի որ անհնար է ապահովել աշխատանքի արտադրողականության աճ առանց ժամանակակից ռեսուրսախնայողական տեխնոլոգիայի ներդրման: Գյուղատնտեսությունում աշխատանքի արտադրողականության կայուն աճ ապահովելու համար անհրաժեշտ է իրականացնել համալիր միջոցառումներ ուղղված բերքատվության բարձրացմանը, նոր բարձր արտադրողական, ունիվերսալ տեխնիկայի ներդրմանը, պետության աջակցության ծավալների մեծացմանը, գյուղատնտեսությունում զբաղվող աշխատողների շահագրգռվածության բարձրացմանը, արտադրվող գյուղատնտեսական մթերքների իրացման խթանմանը:

Մարզում առկա է որոշակի խնդիրներ կապված արտադրվող գյուղատնտեսական մթերքների իրացման հետ: Վերամշակողող կազմակերպությունները մթերում են սահմանափակ քանակությամբ մթերք, հետևաբար գյուղացին լուրջ խնդիրներ է ունենում արտադրանքի իրացման հետ կապված:

ՏԻԳՐԱՆ ԵՐԱՆՈՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոչարյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՇՈՒԿԱՅԻ ՈՒ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շուկայական հարաբերությունների տնտեսական կարգավորման գործընթացը ուսումնասիրելիս անհրաժեշտ է հստակ սահմանազատել պետության տնտեսական դերը ազատ շուկայի և կարգավորվող շուկայական տնտեսության պայմաններում: Տնտեսագիտության մեջ ազատ շուկան բնութագրվում է հետևյալ չափանիշներով՝

- մրցակցության մասնակիցների անսահմանափակ թիվ, ազատ մուտք շուկա և նրանից ազատ դուրս գալու հնարավորություն, ազատ շուկային համապատասխանում է սեփականության ցանկացած տեսակ: Ազատ մրցակցության համակարգը բացառում է սպառողների ցանկացած տեսակի խտրականություն,
- նյութական, աշխատանքային, ֆինանսական և այլ ռեսուրսների բացարձակ շարժունակություն,
- մրցակցության բոլոր մասնակիցներին արտադրանքի և ծառայությունների առաջարկի, գների վերաբերյալ շուկայական տեղեկատվության ամբողջական ծավալի տրամադրում,
- միասեռ ապրանքների բացարձակ նույնանույնություն, ապրանքի ապրանքային մակնիշի և ապրանքի որակի բնութագրման անհատական բնութագրիչներ,
- ազատ մրցակցության մասնակիցները ազդեցություն չպետք է ունենան այլ ձեռնարկատերերի ընդունած որոշումների վրա:

Այսպիսով, ազատ շուկայի համակարգում պետք է բացակայի մոնոպոլիան, ինչպես նաև բացառվի արժեզրկումը, գործազրկությունը և գերարտադրությունը: Սակայն դրա հետ մեկտեղ ազատ շուկան ի վիճակի չէ երաշխավորել հասարակության բոլոր սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծումը: Այստեղ հատուկ նշանակություն ունի պետության տնտեսական դերը շուկայական հարաբերությունների կարգավորման գործում:

Պետության տնտեսական միջամտությունը պահանջվում է այնպիսի խնդիրների լուծման դեպքում, որոնք ենթակա չեն շուկայական մեխանիզմների կարգավորման: Դրանցից հիմնականները հետևյալն են.

- արտաքին ազդեցությունների պետական կարգավորումը: Այդ առաջին հերթին վերաբերում է շրջակա միջավայրի պաշտպանությանը, հողի բերրիության բարելավմանը, մելիորատիվ միջոցառումների իրականացմանը, հողատարման երևույթների կանխմանը և այլն,
- հասարակական սպառման ապրանքների պահանջարկի պետական կարգավորումը: Ազատ շուկան հնարավորություն է տալիս բավարարել միայն այն պահանջմունքները, որոնք արտահայտվում են պահանջարկի միջոցով: Սակայն գոյություն ունեն այնպիսի ապրանքներ ու ծառայություններ, որոնց սպառմանը մասնակցում են հանրապետության ամբողջ բնակչությունը: Առաջին հերթին դա վերաբերում է հասարակական կարգի պահպանությանը, ազգային պաշտպանությանը, պետական կառավարմանը, միասնական էներգետիկ համակարգի կենսագործունեությանը, կոմունիկացիաների համակարգին և այլն,
- պետության կողմից երկրի տնտեսության համար անհրաժեշտ դրամի զանգվածի ապահովումը: Շուկան ունակ չէ լուծել նշված կարևոր հիմնախնդիրը:

Պետության տնտեսական գործունեության գլխավոր նշանակությունը կայանում է շուկայի այն գործառույթների լրացումը, որոնք շուկան ի վիճակի չէ արդյունավետ իրականացնել: Շուկան չի երաշխավորում աշխատանքի իրավունքի պահպանումը: Շուկայական տնտեսությունում տեղ ունի գործազրկությունը: Պետությունը պետք է կարգավորի աշխատուժի շուկան՝ նպատակ ունենալով բնակչության լիարժեք զբաղվածության ապահովումը:

«Շուկան չի կարող ապահովել երկրի բոլոր ճյուղերում նյութատեխնիկական առաջընթացի արագացումը, հատկապես հիմնարար գիտությունների և տեխնիկայի զարգացումը, որոնք պահանջում են խոշոր ներդրումներ: Շուկայական տնտեսությունը կարիք ունի պետության կողմից հակասղաճային և հակամենաշնորհային քաղաքականության»[1]:

Ագրարային շուկայի տնտեսական կարգավորումը հիմնվում է պետական հովանավորչության վրա, որը նախատեսում է ընդլայնված վերարտադրության սուբսիդավորում, հարկային և վարկային խթանման միջոցառումներ:

---

[1] Коваленко Н.Я. Экономика сельского хозяйства. С основами аграрных рынков. Курс лекций.-М.: Ассоциация авторов и издателей. ТАНДЕМ: Издательство ЭКМОС, 1998. с.104.

Ագրարային շուկայի տնտեսական խթանման խնդիրների լուծումը պետք է ընթանա հետևյալ ուղղություններով.

- պետության պարենային անվտանգության ապահովում,
- գյուղատնտեսության և արդյունաբերության միջև գիտականորեն հիմնավորված համարժեք հարաբերակցության սահմանում,
- գյուղական ապրանքարտադրողների եկամուտների պահպանումը մինչև ընդլայնված վերարտադրության ապահովման մակարդակ,
- գիտատեխնիկական նվաճումների ներդրման և արտադրության արդյունավետության բարձրացման համար պայմանների ստեղծում,
- պետության ներսում միասնական տնտեսական տարածքի ձևավորում, մերձավոր և հեռավոր արտերկրների շուկաներ ելքի ապահովում:

Ընդհանուր առմամբ գյուղատնտեսությունը մուտք գործելով շուկայական տնտեսություն անհրաժեշտություն է դառնում ագրարային և պարենային քաղաքականության հայեցակարգի և ճյուղի պետական կարգավորման սկզբունքների մշակումը: Վերջիններս պետք է հիմնվեն երկրի գյուղատնտեսության ճյուղի առանձնահատկությունների, նյութատեխնիկական և արտադրական ռեսուրսների և գյուղի զարգացման սոցիալական պայմանների վրա:

Գյուղատնտեսությունը տարբերվում է տնտեսության մյուս ճյուղերից իր արտադրության առանձնահատուկ պայմաններով (հողը, կենդանի օրգանիզմները, աշխատանքի ժամանակահատվածի և արտադրության ժամանակահատվածի անհամապատասխանությունը և այլն), ինչպես նաև վերջնական արդյունքով՝ պարենային ապրանքներով: Այդ դեպքում պարենամթերքի պահանջարկի կախվածությունը արտադրանքների գներից. հանդիսանում է նվազ առաձգական: Բացարձակ ոչ առաձգականությունը նախատեսում է, որ շուկայական գների փոփոխությունը ազդեցություն չի ունենում արտադրանքների պահանջարկի վրա:

Գյուղատնտեսական արտադրանքի արտադրության ծավալները հնարավոր չէ կարճաժամկետ ժամանակահատվածում փոփոխել, քանի որ այն կախված է արտադրության մասնագիտացումից (մասնավորապես՝ պտղաբուծությունում, խաղողագործությունում, անասնապահությունում պահանջվում է 5-7 տարի, դաշտավարությունում 2-3 տարի), ինչպես նաև արտադրության ինտենսիվացման գործոնի ազդեցությունից (պարարտանյութերի ներմուծում, տեխնոլոգիաների փոփոխություն, մեքենաների և սարքավորումների կիրառում): Շուկայում ձևավորված նոր գների մակարդակին գյուղատնտեսության համապատասխանեցումը պահանջում է համեմատաբար երկարատև ժամանակահատված: Գոյություն ունի զգալի ժամանակային հատված (լագ) գների փոփոխության և գյուղատնտեսական արտադրության համապատասխան ռեակցիայի միջև (լագը ժամանակի խզումն է ներդրումների (ինվեստիցիաների) իրականացման և արդյունքի ստացման միջև: Գումարների մեծ մասը ներդրվում է առաջին տարում, իսկ հատույցը սովորաբար ապահովվում է միայն 2-5 տարի հետո):

Տարբեր երկրների փորձը ցույց է տալիս, որ գնային մեխանիզմը չի կարող լիարժեք կատարել առաջարկի և պահանջարկի կարգավորիչի իր գլխավոր գործառույթը: Տվյալ դեպքում պարենամթերքների արտադրությունը չի հանդիսանում ինքնակարգավորվող և արտադրողների (գյուղատնտեսության) ու սպառողների շահերի պաշտպանությունը պահանջում է արտաքին ներգործություն: Այստեղ հիմնական կարգավորիչ դերը պետք է ունենա պետությունը:

Արտադրության արդյունաբերական մեթոդներին անցման դեպքում ինվեստիցիաների նկատմամբ գյուղատնտեսության պահանջարկի ավելացումը տանում է ճյուղի վերարտադրության սահմանափակմանը և գյուղատնտեսությամբ զբաղվող բնակչության եկամուտների մակարդակի նվազմանը: Այս դեպքում, եթե գործի միայն շուկայական ուժը, ապա գյուղական բնակչության եկամուտները կլինեն առավել ցածր, քան քաղաքային բնակչությանը: Այդ անհամամասնության հարթումը պահանջում է պետության ուժերի միջամտություն: Ինչպես ցույց է տալիս տարբեր երկրների, այդ թվում՝ ԱՄՆ-ի փորձը ցածր արդյունավետ է համարվում գյուղատնտեսական մթերքների գների և գյուղատնտեսության մատակարարվող ռեսուրսների գների զուգակշռության պահպանումը: Առավել ընդունելի է համարվում գյուղական և քաղաքային բնակչության եկամուտների զուգակշռության ապահովման սկզբունքը, տարբեր միջոցառումների համալիրի կիրառման միջոցով, մասնավորապես՝ հարկերի գանձում, կենսաթոշակային ծառայություններին պետական աջակցություն, գյուղական տարածքներում արդյունաբերության խթանում և բնակչության զբաղվածության ապահովման և այլ հնարավորությունների ստեղծում: Կարևոր է համարվում նաև գյուղատնտեսության արտադրական և գյուղի սոցիալական ենթակառուցվածքների պետական ֆինանսավորումը:

Շուկայական հարաբերությունների զարգացման կարևորագույն հիմնախնդիրներից է հողի հարցը՝ հողի տիրապետումը, հողօգտագործումը: Հողային հարաբերությունների պետական կարգավորումը պետք է նպատակաուղղվի գյուղատնտեսական հողատեսքերի առավել արդյունավետ օգտագործմանը և պահպանմանը: Պետությունը պետք է իր վրա վերցնի հողաշինարարական և մելիորատիվ աշխատանքների իրականացումը, քանի որ գյուղատնտեսությունում տնտեսավարողների միջոցներն ակնհայտորեն չեն կարող բավարարել այդ աշխատանքների կատարումը: Պետական կարգավորման առարկա պետք է լինի նաև գյուղատնտեսական հողատեսքերի նպատակային օգտագործումը և նշանակության պահպանումը:

Շուկայի և պետության փոխհարաբերությունների կենտրոնական հիմնախնդիրներից է պարենամթերքների ներմուծումը և արտահանումը: Ազատ առևտրի և ագրարային հովանավորչության սկզբունքները կախված են երկրի տնտեսության և գյուղատնտեսական արտադրության պայմաններից: Ագրարային հովանավորչության սկզբունքները ենթադրում են.

- երկրի պարենային անվտանգության ապահովումը,

- արտաքին առևտրի հաշվեկշռի բարելավում՝ ներմուծման սահմանափակման և արտահանման սուբսիդավորման միջոցով,
- ազգային գյուղատնտեսության պահպանումն ու զարգացումը, որպես ամբողջ տնտեսության կարևորագույն ճյուղերից մեկը:

Պետության լայն միջամտությունը տնտեսության մեջ, մասնավորապես՝ գյուղատնտեսության արտադրական և սոցիալական մեխանիզմներում պահանջում են նշանակալի ծախսեր: Այսպես օրինակ, «Ավստրալիայում գյուղատնտեսության պետական աջակցության մակարդակը ամբողջ արտադրանքի նկատմամբ կազմում է 44 %, Կանադայում՝ 35 %, Ֆինլանդիայում՝ 72 %, Շվեդիայում՝ 47 %, Ճապոնիայում՝ 72 %, Շվեցարիայում՝ 76 %, Եվրամիությունում՝ 37 %, ԱՄՆ-ում 27-40 %: Իրականում ֆերմերը, այս երկրներում, շուկայական վճարմամբ ստանում է գնի մի մասը, եկամուտների զգալի մասը ստացվում է պետական աղբյուրներից»[1]:

Հայաստանի Հանրապետությունում վիճակը այլ է, որը պայմանավորված է երկրի բյուջետային հնարավորություններով: Չնայած վերջին տարիներին գյուղատնտեսությանը հատկացվող բյուջետային միջոցները տարեցտարի ավելանում են, սակայն դրա մասնաբաժինը գյուղատնտեսության համախառն արտադրանքի մեջ չի գերազանցում 2 %-ի սահմանը: Այդ մասին է վկայում ՀՀ պետական բյուջեից ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը (գյուղատնտեսության զարգացման համար) հատկացված միջոցների և գյուղատնտեսության համախառն արտադրանքի համադրման տվյալները (աղյուսակ 1):

Աղյուսակ 1.

ՀՀ պետական բյուջեից ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը (գյուղատնտեսության զարգացման համար) հատկացված միջոցները և գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2002-2006թթ.

	2002թ.	2003թ.	2004թ.	2005թ.	2006թ.
Բյուջետային հատկացումները,մլն դրամ	2197.5	2472.6	3231.0	3728.4	6155.8
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը տվյալ տարվա գներով, մլրդ դրամ	377.6	410.1	504.1	493.0	555.9
Բյուջետային հատկացումների մասնաբաժինը համախառն արտադրանքի նկատմամբ, %	0.6	0.6	0.64	0.76	1.1

Պահանջարկի և առաջարկի հավասարակշռության պահպանումը, տեղական արտադրողների պաշտպանությունը, գյուղում կառուցվածքային և սոցիալական վերափոխումների իրականացումը կարող է կրել ինչպես տնտեսական, այնպես էլ վարչական բնույթ:

Գյուղատնտեսության պետական կարգավորման համակարգում առաջատար տեղ է հատկացվում գների համապատասխան մակարդակի և գնային հավասարակշռության պահպանմանը: Գնային մեխանիզմների ապահավասարակշռությունը հանգեցնում է քայքայիչ հետևանքների: Պարենամթերքների գնային համակարգի տատանումները մեղմվում է պետության միջամտությամբ: Ագրարային քաղաքականությանն ուղղվող պետական ծախսերի գերակշռող մասը պետք է ուղղվի գների պահպանմանը:

ԱՐԱՐԱՏ ՋԱՔԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, տ.գ.դ., պրոֆեսոր
ԱՐՏԱՎԱԶԴ ՕՀԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԹԵԹԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայաստանի հանրապետության թեթև արդյունաբերությունը նախորդ դարի 80-ական թթ. հանդիսանում էր երկրի արդյունաբերության ամենազարգացած հատվածներից մեկը: Այս ճյուղում զբաղված էր մոտ 115 հազար աշխատող և տալիս էր երկրի ընդհանուր արտադրանքի մոտ 25 տոկոսը: Արդյունաբերության այս ճյուղը մեր հանրապետությունում հիմնված էր տեքստիլ արտադրության ու կարպետագործության ասպարեզներում դարերով, ինչպես նաև կոշկեղենի համեմատաբար վերջին ժամանակներս զարգացած ենթաճյուղում ձեռք բերված փորձի վրա: Պետք է նշել նաև, որ դրանք մեծ համբավ ունեին նախկին Խորհրդային Միության և «սոց. ճամբարի» այլ երկրներում:

ԽՍՀՄ-ի փլուզման հետ մեկտեղ կորցվեցին նաև այս ճյուղի հիմնական ու ավանդական շուկաները: Պայմանավորված լինելով արտաքին առևտրի ազատականացման բուռն գործընթացներով ու դրանից բխող և օրեցօր ուժեղացող միջազգային մրցակցության բարձր աստիճանով՝ երկրի արդյունաբերության այս ճյուղի համար երկար ժամանակ խիստ դժվար էր ապահովել արտադրանքի մուտքը նոր շուկաներ: Արդյունքում 90-ականներին գրեթե ամբողջությամբ փլուզվեց թեթև արդյունաբերության ճյուղը: Այդ շրջանում երկրի ընդհա-

[1] Коваленко Н.Я. Экономика сельского хозяйства. С основами аграрных рынков. Курс лекций.-М.: Ассоциация авторов и издателей. ТАНДЕМ: Издательство ЭКМОС, 1998. с.107.